



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Поблизости

поблизости иригуерседеперуна  
кучуны иригуерседе  
руар иригуерседе

рр 81р 1906р.

491.99-5

р-88



49-64 596-125  
7/2/55



491.542-5  
~~Թ-88~~

ՅԵՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԸՆԵԸՆ

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

ՄՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱԳԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶԻԻ

Պետական ստորին և միջնակարգ դպրոցների համար

ԹԻՖԼԻՍ 1905 թ.

Տպար. „ՀՆՐԱՊԷՍ“ ԸՆԿ. Մաղաթ. փ. № 15.  
(68)



19 APR 2013

04 MAY 2010

431.99-5 ՅԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՄԱՆՆԵՐՆՑ  
P-88

uf



ՀԱՄԱՌՕՏ

# ՄՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱԶԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶԻԻ

ՔԱՂ.Ն

19713  
7001



Պետական ստորին եւ միջնակարգ դպրոցների համար



ԹԻՖԼԻՍ 1904 թ.

Տպար. „ԶԵՐՄԷՍ“ Ընկ. Մադար. փ. № 15.  
(68)



Дозволено Цензурою. Тифлисъ, 29-го Октябръ 1904 г.

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Քերականութեան հակառակորդները որքան էլ ուրանան նորա անհրաժեշտութիւնը, այնուամենայնիւ լեզւի ուսումնասիրութեան գործում մեծ դեր են կատարում ուղիղ կարգալու և զրելու որոշ կանոնները: Ճիշտ է, լեզուն կարելի է սովորել և գործնական կերպով, բայց երբ գործնականի հետ միանում է և թէօրիան, գործն աւելի հեշտանում և աւելի քիչ ժամանակ է խլում մեզանից: Առհասարակ գործնականը և տեսականը պիտի լրացնեն միմեանց: Մեր դպրոցներում հայոց լեզւի դասերի թիւն այնքան փոքր է, որ հայերէնի գործնական ուսումնասիրութիւնը չի կարող լիովին հասնել իր նպատակին, եթէ որ չը նըպաստի քերականութիւնը: Մի քերականութիւն աւելի հեշտ է սովորում այն ժամանակ, երբ սովորողը գիտէ մի որևիցէ ուրիշ լեզւի քերականութիւն: Այս ստուգարանութիւնը կազմելիս՝ գլխաւորապէս նկատի եմ ունեցել մեր պետական դպրոցների այն հայ աշակերտներին կամ աշակերտուհիներին, որոնք արդէն գիտեն ռուսերէն քերականութիւն: Այդ պատճառով իւրաքանչիւր քերականական տէրմինի մօտ փակագրծում զրել եմ նորա ռուսերէն թարգմանութիւնը:



որի շնորհիւ ռուսերէն իմացողն իսկոյն իւրացնում է տէրմինի նշանակութիւնը:

Սակայն նկատի ունենալով, որ դասագիրքս կարող է պիտանի լինել և ռուսերէն չ'իմացողին, համառօտ կերպով բացատրել եմ տէրմիններից զլիսաւորները: Աշակերտների ուղեղը չը ծանրաբեռնելու համար՝ առհասարակ աշխատել եմ խոյս տալ քերականական երկար ու բարակ բացատրութիւններից և աւելորդաբանութիւններից: Կանոնները բացատրւած են կարճ և ամփոփ: Ամեն մի կանոնից յետոյ բերւած է մի կամ երկու կարճ օրինակ: Քերականութիւնը գիտակցօրէն սովորելու և սովորողների մէջ ինքնուրոյնութիւն զարգացնելու համար, անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր կանոնի վերայ սովորողներն իրանք կազմեն իրանցից օրինակներ, ոչ թէ օգտուեն պատրաստի օրինակներից: Այդ է պատճառը, որ իմ գրքում չեմ գրել շատ օրինակներ:

Առանձին ուշադրութիւն դարձնելով ուղղագրութեան վերայ, իւրաքանչիւր բանի մասնից յետոյ գետեղել եմ նորա ուղղագրական կարևոր գիտելիքները: Առանձնապէս շեշտւած են իմ գրքում այն դէպքերը, երբ գրւում են *б, է, ո, օ, յ* և այլն:

Ենթադրելով, որ դասագիրքս կարող է գործ ածուել թէ ստորին և թէ բարձր դասարաններում, կանոնները գետեղել եմ երկու տեսակ գրով՝ խոշորատառ և մանրատառ: Խոշորատառը որոշւած է ստորին դասարանների համար, իսկ մանրատառը կարելի է անցնել բարձր դասարաններում խոշորատառը կրկնելու ժամանակ:

Վերջացնելով խօսքս, պարտք եմ համարում յայտնել խորին շնորհակալութիւնս մեր մանկավարժբանաստեղծ պ. Ղազարոս Աղայեանին, որ իր խորհրդներով օգնեց ինձ դասագիրքս կազմելու ժամանակ:

Թիֆլիսի II իգական գիմնազիայի, սուրբ Նուկէի և Առեւտական դպրոցի ուսուցիչ՝

**Յարութիւն Թումանեան**



## Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Գ Ր Ե Ր

§ 1. Հայոց լեզուն ունի 38 գիր կամ տառ (буквы)՝  
ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, լւ, ծ, կ, հ, ձ,  
ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ, տ, ը, ց, ւ,  
փ, ք, օ, ֆ:

Սրանք բաժանում են՝

- 1) Չայնատրների (гласныя) — ա, ե, է, ը, ի, ո, օ.
- 2) Կիսաձայնատրի (полугласная) — յ.
- 3) Բաղաձայնների (согласныя) — մնացած 30 գիրը:  
Երկու տառի միաւորութիւնից կազմւել են  
Երկրարձաններ (двугласныя)՝ եա (я), եօ (ѐ),  
իւ (ю), այ (ай), ոյ (уй, ой):

§ 2. Չայնատր գրերից

ա) Ա և ո բառերի վերջին իրանցից յետոյ ընդունում են յ:—Մառ-այ, երեխ-այ, Աստուծ-ոյ, երեկ-ոյ:

Բացառութիւն են կազմում՝ (դու) զնա, ասա, խաղա... սա, դա, նա; սրա, դրա, նրա, սորա, դորա, նորա, աճա, ապա; տոյ, օտար և յատուկ անունները—փաշա, բօշա, Աննա, Յուզա, Մոսկա, Մուսա և այլն:



բ) Ե բառի սկզբում կարգացում է սղած իէ (եւ, եկաւ), իսկ բառի միջին՝ է (մնր, ձեր):

Ե բառի վերջին չի գործ ածւում:

գ) Ո բառի սկզբում կարգացում է վօ (ոսկի, որդի). իսկ բառի միջին՝ օ (նոր, ձոր):

Ո, երբ վ տառից առաջ է լինում, հնչում է օ (ով, օվկիանոս):

Ո՛ միանալով լ տառի հետ, կազմում է ու (յ):

Կիսածայնաւոր յ տառը

ա) Բառի սկզբում կարգացում է հ (յատակ, յիսուն):

բ) Բառի միջին և վերջին՝ կէս ի կամ ինչպէս ուսեբէն փ (այգի, հայ, թէյ):

Յ կարգացում է միայն միավանկ բառերի վերջում. իսկ բազմավանկ բառերից յետոյ միշտ համը է մնում:—Փեսայ=փեսա, քահանայ=քահանա:

Օտար բառերի վերջին ա-ից յետոյ յ չի դնում. իսկ եթէ դնում է, կարգացում է:—Արփաչայ, Գեօկչայ, Շանխայ:

գ) Ո տառի հետ միասին կազմում է ոյ (յի, օի) երկբարբառը:

Ոյ արմատական բաղաձայնի առաջ կարգացում է ույ (յի):—Ոյժ, քոյր:

Ոյ ձայնաւորի առաջ կարգացում է օյ (օի):— Հոյակապ, գոյութիւն, նոյեմբեր:

Ոյ բազմավանկ բառի վերջին կարգացում է օ (Երեկոյ), իսկ միավանկ բառի վերջին՝ օյ (նոյ):

Բաղաձայններից

ա) Ի բառի սկզբում երբէք չի գործ ածւում. բառի միջին և վերջին հնչում է վ (աւար, պառաւ),

ո տառի հետ միասին կազմում է ու (թուղթ, ուշ), իսկ ի տառի հետ միասին՝ իւ (իւ):—Հիւր, իւր:

Իւ կարգացում է յօ բառի սկզբում և արմատական բաղաձայնի առաջ (իւղ, հիւան). իսկ բառի վերջին և ձայնաւորի առաջ կարգացում է իվ (թիւ, հիւանդ):

Ի՛ դնելով ե-ից յետոյ՝ կազմում է եւ=և:

բ) Վ գործ է ածւում միշտ բառի սկզբին (Վարդ, Վան) և ո ձայնաւորից յետոյ (ծով, գրչով): Միւս դէպքերում, որտեղ լւում է վ, գրւում է լ (ու):— Նւէր, սուէր, աւէց:

գ) Ս, զ, շ բառի սկզբում՝ պ, կ, տ, բ, գ, փ, բ, թ գրերից առաջ՝ հնչում են ըս, ըզ, ըշ:—Սպիտակ=ըսպիտակ, սկեսուր=ըսկեսուր, ստոյգ=ըստոյգ, զգալ=ըզգալ, շտապ=ըշտապ:

Բացառութիւն են կազմում սփռել=սըփռել, շփոթ=ըշփոթ:

Վ Ա Ն Կ Ե Ի Բ Ա Ռ

§ 3. Ամեն ձայնաւոր գիր իր մօտի բաղաձայնների հետ միասին կազմում է վանկ (СЛОГЪ):—Սեղան, գրա-տախ-տակ:

Մէկ կամ աւելի վանկ, որ իր մէջ պարունակում է մի որևիցէ միտք կամ նշանակութիւն, կոչւում է ըսո (СЛОВО):—Մարդ, քանոն:

Բառը լինում է՝

1) Միավանկ (односложное):—Ծառ, տուն:

3) Բազմավանկ (многосложное):—Մա-տիտ, թա-նա-քա-ման, աշ-խա-տա-սի-րու-թիւն:

Բառը կազմութեամբ լինում է՝



- 1) Պարզ (простое):—Սեղան, տուն:
- 2) Բարդ (сложное):—Սեղանատուն, բարեկամ:  
Բարդ բառերը կազմվում են գլխաւորապէս ա և ն յօդակապ տառերի օգնութեամբ:  
Կան բառեր, որոնք կազմվում են առանց յօդակապ տառերի:—Հացթուխ, ջրկիր:

§ 4. Բառերը մի տողից միւսը փոխադրելու համար՝ պէտք է գիտենալ տողադարձի (переносъ) կանոնները:

Այդ կանոնները հիմնւած են բառերի վանկելու վերայ և սրանք են.

- 1) Երկու ձայնաւորներից մէկը մնում է առաջին տողում, իսկ երկրորդը փոխադրւում միւս տողը:— Լի-ազօր, մի-աբան, տի-նգերք:
- 2) Եթէ երկու ձայնաւորի մէջ կայ մի բաղաձայն, վերջինս անցնում է հետեւեալ տողը:— Հո-գի, տա-րի:
- 3) Եթէ երկու ձայնաւորի մէջ կայ երկու բաղաձայն, վերջիններս իրարից բաժանւում են:— Ար-դար, գառ-նուկ:
- 4) Եթէ երկու ձայնաւորի մէջ կայ երեք բաղաձայն, միայն վերջին բաղաձայնն է փոխադրւում միւս տողը:— Պաշտ-պան, քաղց-ըութիւն:
- 5) Եթէ բառի մէջ երկու կամ երեք բաղաձայնի մօտ լւււում է ը, տողադարձի մէջ այդ գիրը զրւում է:— Գը-լուխ, թըշ-նամի, դա-ռըն, մա-սըն:

6) Միավանկ բառերը չեն փոխադրւում մի տողից միւսը:

7) Երկբարբառները տողադարձի ժամանակ չեն բաժանւում միմեանցից:— Հայ-րիկ, գիւ-ղում:

Տողադարձի նշանը կոչւում է ենթամնայ (-). սա դնւում է առաջին տողի վերջին:

Ա Ռ Ո Գ Ա Ն Ո Ի Թ Ե Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Բ

§ 5. Մեր մտքերը միմեանց հետ չը խառնելու համար՝ գործ ենք ածում զանազան առոգանութեան կամ կէտադրութեան նշաններ (знаки препинания): Սրանք են՝

Ստորակէտ (,)	Շեշտ (')
Միջակէտ (.)	Երկար (")
Վերջակէտ (:)	Հարցական (°)
Բազմակէտ (...)	Չակերտ « »
Բուլթ (')	Փակագիծ ( )

Ռուսաց կէտադրութեան նշանների հետ համեմատած՝

Մեր (,)	հաւասար է նրանց (;)
(:)	» » » (.)
(')	» » » (')
(")	(') (") » » » (!)
(°)	» » » (?)

Մնացած նշանների մէջ տարբերութիւն չը կայ:

Ն Ա Ե Ա Դ Ա Ս Ո Ի Թ Ի Ի Ն

§ 6. Ամեն մի առանձին միտք, որ արտայայտւում ենք բառերով, կոչւում է նախադասութիւն (предложение):— Հաւը խօսեցաւ. օրը բացւեցաւ:



Նախադասութեան մէջ երկու գլխաւոր անդամ (главный членъ) կայ՝ 1) ենթակայ (подлежащее) և 2) ստորոգեալ (сказуемое):

1) ենթակայ կոչուում է այն գլխաւոր առարկան, որի մասին խօսուում է նախադասութեան մէջ: — Հաւը, օրը:

2) Ստորոգեալ կոչուում է այն, ինչ որ ասուում է ենթակայի մասին: — Խօսեցաւ, քացեցաւ:

Ենթական պատասխանում է ո՞վ և ի՞նչ հարցերին, իսկ ստորոգեալը՝ ի՞նչ է անում, ի՞նչ արաւ կամ ի՞նչ կ'անի առարկան, ի՞նչ եղաւ, ինչպէս է, ի՞նչ է և այլն:

Ենթական ստորոգեալից ոչ մի կէտադրութեան նշանով չի բաժանուում:

§ 7. Բացի գլխաւոր անդամներից, նախադասութեան մէջ լինում են երկրորդական անդամներ (второстепенные члены), որոնք են՝

1) Որոշող կամ յատկացուցիչ բառեր (опредѣлительныя слова). սրանք պատասխանում են ի՞նչպիսի կամ ո՞րպիսի, ո՞ւմ, ինչի՞, քանի՞, ո՞ր հարցերին: — Եղբայրս լաւ (ի՞նչպիսի) մարդ է: Լեւոնի (ո՞ւմ) հայրը վարժապետ է: Տան (ինչի՞) պատերը բարձր են: Ես ունիմ երկու (քանի՞) գիրք: Մարգարիտը առաջին (ո՞ր) դասարանումն է: Թիֆլիս (ո՞ր) քաղաքը մեծ է:

2) Լրացուցիչ բառեր (дополнительныя слова)՝ ո՞ւմ, ի՞նչ (ը), ո՞ւմ, ինչի՞. ո՞ւմնից, ինչի՞ց. ո՞ւմնով, ինչո՞վ. ումնո՞ւմ, ինչո՞ւմ: — Հայրը սիրում է որդուն (ո՞ւմ): Լեոնը գնեց մատիտ (ի՞նչ): Եղբայրը ստացաւ

նամակ իր քրոջից (ումնի՞ց): Մարգարիտը գրում է դասը մատիտով (ինչո՞վ):

3) Պարագայական բառեր (обстоятельныя слова): Սրանք ցոյց են տալիս գործողութեան՝

ա) տեղը, պատասխանելով, ո՞րտեղ ո՞ւր, ո՞րտեղից հարցերին: — Գիւղացին աշխատում է դաշտում (ո՞րտեղ): Նա դաշտից (ո՞րտեղից) գնում է տուն (ո՞ւր):

բ) ժամանակը՝ ե՞րբ, մինչեւ ե՞րբ, որքա՞ն ժամանակ, ո՞ր ժամանակից: — Մայիսին (Երբ) բացուում է վարդը: Առաւօտից (ո՞ր ժամանակից) մինչեւ նրեկոյ (մինչեւ Երբ) նա կարդում էր:

գ) որպիսութիւնը՝ ի՞նչպէս, ի՞նչ տեսակ: — Սոխակը երգում է անուշակ (ի՞նչպէս):

դ) պատճառը և նպատակը՝ ինչո՞ւ, ինչի՞ համար: — Աշակերտն իր ջանասիրութեան համար (ինչի՞ համար, ինչո՞ւ) պարգև ստացաւ: Ձկնորսը գնաց ձուկ ըննելու (ինչո՞ւ):

Պարագայական բառերը միւս անդամներից ոչ մի կէտով չեն բաժանուում:

4) Կոչական բառեր (звательныя слова), որոնք ցոյց են տալիս՝ թէ ո՞ւմն է դիմում խօսողը: — Հայր մեր, Որ երկնքումն ես: Սյուսեղ արի, Մարգարիտ: Գնա՛, որդի՛, աշխատի՛ր:

Երբ կոչական բառը գրւած է նախադասութեան սկզբում կամ վերջում, միւս անդամներից բաժանուում է ստարակէտով. իսկ երբ գրւած է նախադասութեան միջում, երկու կողմից ստորակէտ է առնում:

Կոչական բառերի գլխին դնում է շեշտ (') : — Հայր. Մարգարիտ. որդի:



## ԲԱՆԻ ՄԱՍՆԵՐ

§ 8. Ամեն մի առանձին վերցրած բառ կոչուում է *բանի կամ խօսքի մասն* (часть рѣчи):

Բանի մասները ինը տեսակ են՝

1. Գոյական անուն (имя существительное),

2. Ածական անուն (имя прилагательное),

3. Դերանուն (мѣстоименіе),

4. Թւական անուն (имя числительное),

5. Բայ (глаголь),

6. Մակբայ (нарѣчіе),

7. Նախադրութիւն (предлогъ) և յետադրութիւն,

8. Շաղկապ (союзъ),

9. Միջարկութիւն (междометіе):

Մրանցից առաջին հինգը փոփոխական են, իսկ վերջին չորսը՝ անփոփոխ:

## ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

§ 9. Ամեն մի առարկայի անուն կոչուում է գոյական:—Մարդ, ծառ, հօտ, Արաքս, բարութիւն:

Գոյական անունները փոփոխուում են հոլովով (падежъ) և թիով (число): անունների այս փոփոխութիւնը կոչուում է հոլովում (склоненіе):

Հոլովները եօթն են՝

1. Ուղղական (именительный)—*ով, ինչ:*

2. Հայցական (винительный)—*ում, ինչ:*

3. Սեռական (родительный)—*ում, ինչի:*

4. Տրական (дательный)—*ում, ինչի:*

5. Բացառական (отложительн.)—*ումնից, ինչից:*

6. Գործիական (творительный)—*ումնով, ինչով:*

7. Ներգոյական (мѣстный)—*ումնում, ինչում:*

Բացի սրանցից կայ և կոչական հոլով (звательный падежъ), որ նման է ուղղականին:

Ո՞վ հարցը վերաբերում է շնչաւոր առարկաներին (одушевленные предметы), իսկ ի՞նչ՝ անշունչ առարկաներին (неодушевленные предметы):

§ 10. Թիւը երկու է՝ եզակի (единственное) և յոգնակի (множественное):



Յոգնակի թիւը կազմում է եզակիից, ընդունելով նր կամ ներ վերջաւորութիւնը: Միավանկ բառերը վերջանում են նր (ծառ-նր, հաւ-նր, պատ-նր), իսկ բազմավանկ բառերը՝ ննր (մատիտ-ննր, սեղան-ննր, աշակերտ-ննր):

Մի քանի միավանկ բառեր՝ կորցնելով իրանց արմատական ն վերջաւորութիւնը (ձեռ, ոտ, դուռ, գառ, ձուկ, մուկ և այլն), յոգնակի թւում վերջանում են ննր (ձեռներ, ոտներ, դռներ, գառներ և այլն):

§ 11. Գոյական անունները հայոց լեզուում չունեն բերականական սեռ (родъ):

Քերականական սեռ ունեն միայն այն անունները, որոնք պատկանում են կին-մարդկանց. սրանք վերջանում են՝ ուհի, անուշ և դուխտ:—Աշակերտ-ուհի, ուսուցչ-ուհի, հայ-ուհի, Հայկ-անուշ, Վարդ-անուշ, Խոսրովի-դուխտ:

Միւս անունների սեռը իմացում է միայն նշանակութեամբ. օրինակ՝ հայր, մայր, եղբայր, պապ, քրոջաղ արական (мужскій) սեռի անուններ են. իսկ մայր, քոյր, հարս, տատ, մարի, մաքի—իգական (женскій) սեռի: Անշունչ առարկաների անունները սեռ չունեն:

§ 12. Գոյական անունները լինում են երեք տեսակ՝ 1) յատուկ (собственное), 2) հասարակ (нарицательное) և 3) հաւաքական (собирательное):

1) Յատուկ կոչւում են այն անունները, որոնք պատկանում են միայն մէկ առարկայի:—Թիֆլիս, Արարատ, Արաքս, Աղեղայիգա:

2) Հասարակ կոչւում են այն անունները, որոնք պատկանում են շատ միատեսակ առարկաների:—Մարդ, թռչուն, սեղան, ծառ:

3) Հաւաքական կոչւում է միասին հաւաքած միատեսակ առարկաների ընդհանուր անունը:—Հօտ, երամ, շոկ, գօրք:

#### ՀՈՒՈՎ Ն ԵՐԻ Վ ԵՐՋԱՆՈՐՈՒԹԻՒՆ Ն ԵՐԸ

§ 13. Ուղղական հոլովը եզակի թւում ունի այնքան շատ վերջաւորութիւններ, որ դժւար է նրանց դասաւորել և բաժանել որոշ կարգերի. գրեթէ ամեն մի անուն ունի իր առանձին վերջաւորութիւնը: Իսկ յոգնակի թւում բոլոր անունները վերջանում են նր կամ ննր (§ 10):


Սեռականը եզակի թւում ունի երեք տեսակ կանոնաւոր վերջաւորութիւն՝ ի (հաց-ի), ու (գին-ու), ան կամ անն (տ-ան, բարութ-ան):

Սեռականի յոգնակին՝ ընդունելով նր կամ ննր, վերջանում է միշտ ի:—Հաց-նր-ի, գինի-ննր-ի, տն-նր-ի, բարութիւն-ննր-ի:

Տրականը նման է սեռականին:

Հայցականը նման է ուղղականին:

Բանական առարկաների (հայր, մայր, աշակերտ, գինուր) անունները, երբ իրանց վերջում ունեն ն կամ ը որոշող մասնիկը, հայցականում ընդունում են սրականի վերջաւորութիւն:





Բացառականը վերջանում է եզակիում ից կամ ուց:—Հաց-ից, գին-ուց, տն-ից, բարութիւն-ից:

Յոգնակին՝ ընդունելով եր կամ ներ, միշտ վերջանում է ից:—Հաց-եր-ից, գինի-ներ-ից, տն-եր-ից, բարութիւն-ներ-ից:

Գործիականը եզակիում վերջանում է ով կամ եւմը:—Հաց-ով, գին-ով, տն-ով, բարութիւն-ով կամ բարութ-եւմը:

Յոգնակին՝ ընդունելով եր կամ ներ, միշտ վերջանում է ու:—Հաց-եր-ով, գինի-ներ-ով, տն-եր-ով բարութիւն-ներ-ով,

Ներգոյականը եզակիում վերջանում է ում:—Հաց-ում, գին-ում, տն-ում (տանը), բարութիւն-ում:

Յոգնակին՝ ընդունելով եր կամ ներ, ընդունում է նոյն ում վերջաւորութիւնը:—Հաց-եր-ում, գինի-ներ-ում, բարութիւն-ներ-ում:

Գ Ո Յ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ի Հ Ո Լ Ո Վ Ո Ի Մ Ը

§ 14. Գոյականներն ունեն երեք հոլովում, որոնք որոշում են եզակի սեռականի վերջաւորութիւններով (§ 13).

Ա. հոլովում—ի	հաց-ի
Բ. հոլովում—ու	գին-ու
Գ. հոլովում—ան, եան	տ-ան, բարութ-եան:

Ա. Հ Ո Լ Ո Վ Ո Ի Մ

(Ի)

§ 15. Ա հոլովման պէս հոլովում են գոյականների մեծ մասը.

Ե զ ա կ ի

Ո. Հ.	ծառ	որսորդ
Ս. Տ.	ծառ-ի	որսորդ-ի
Բ.	ծառ-ից	որսորդ-ից
Գ.	ծառ-ով	որսորդ-ով
Ն.	ծառ-ում	որսորդ-ում

Յ ո զ ն ա կ ի

Ո. Հ.	ծառ-եր	որսորդ-ներ
Ս. Տ.	ծառ-եր-ի	որսորդ-ներ-ի
Բ.	ծառ-եր-ից	որսորդ-ներ-ից
Գ.	ծառ-եր-ով	որսորդ-ներ-ով
Ն.	ծառ-եր-ում	որսորդներ-ում

Բ. Հ Ո Լ Ո Վ Ո Ի Մ

(ու)

§ 16. Բ հոլովման պատկանում են այն գոյականները, որոնք եզակի ուղղականում վերջանում են ի:



Ե զ ա կ ի

Ո. Հ.	զին-ի	ձ-ի
Ս. Տ.	զին-ու	ձի-ու
Բ.	զին-ուց	ձի-ուց
Գ.	զին-ով	ձի-ով
Ն.	զին-ում	ձի-ում

Յ ո զ ն ա կ ի

Ո. Հ.	զինի-ներ	ձի-եր
Ս. Տ.	զինի-ներ-ի	ձի-եր-ի
Բ.	զինի-ներ-ից	ձի-եր-ից
Գ.	զինի-ներ-ով	ձի-եր-ով
Ն.	զինի-ներ-ում	ձի-եր-ում

Գ Հ Ո Լ Ո Վ Ո Ի Մ

§ 17. (ան, եան)

Ե զ ա կ ի

Ո. Հ.	տուն	բարութ-իւն
Ս. Տ.	տ-ան	բարութ-եան
Բ.	տն-ից	բարութ-իւն-ից
Գ.	տն-ով	բարութ-իւն-ով
Ն.	տն-ում (տանը)	բարութ-իւն-ում

Յ ո զ ն ա կ ի

Ո. Հ.	տն-եր	բարութիւն-ներ
Ս. Տ.	տն-եր-ի	բարութիւն-ներ-ի

Բ.	տն-եր-ից	բարութիւն-ներ-ից
Գ.	տն-եր-ով	բարութիւն-ներ-ով
Ն.	տն-եր-ում	բարութիւն-ներ-ում

Տուն բառի պէս են հոլովում շուն (շ-ան), ձուկ (ձկ-ան), դուռ (դռ-ան), լեռ (լեռ-ան), գարուն (գարն-ան), աշուն (աշն-ան) և այլն:

Ում վերջացած անունները հոլովում են Ահոլովման պէս:

Ինչ վեջացած գոյականների եզակի գործիականում երբեմն գործ է ածւում գրաբարի եամբ վերջաւորութիւնը:— Բարութեամբ (փոխանակ բարութիւն-ով), արեամբ (փոխ. արիւն-ով):

Յ Օ Գ

§ 18. Յօդ կոչւում է այն մասնիկը, որ՝ գնւելով անւան վերջին՝ տալիս է նրան որոշ նշանակութիւն և ընդհանուր միտքը մասնաւորի է փոխում:— Զինւոր-ը, մարգարէ-ն, սեղան-ը:

Ը և Ն որոշող յօգեր են: Սրանցից ը գնւում է բաղաձայն գրերից յետոյ, իսկ Ն՝ ձայնաւորներից յետոյ:

Յօդ ունեցող գոյականները հոլովում են այսպէս.

Ե զ ա կ ի

Ո.	զինւոր-ը	սեղան-ը
Ս.	զինւորի-	սեղանի-
Տ.	զինւորի-ն	սեղանի-ն
Հ.	զինւորի-ն	սեղան-ը
Բ.	զինւորից-(ը)	սեղանից-(ը)
Գ.	զինւորով-(ը)	սեղանով-(ը)
Ն.	զինւորում-(ը)	սեղանում-(ը)



Յոգնակի

Ո.	զինւորներ-ը	սեղաններ-ը
Ս.	զինւորների-	սեղանների-
Տ.	զինւորներին	սեղաններին
Հ.	զինւորներին	սեղանները
Բ.	զինւորներին-(ը)	սեղաններին-(ը)
Պ.	զինւորներով-(ը)	սեղաններով-(ը)
Ն.	զինւորներով-(ը)	սեղաններով-(ը)

Ինչպէս տեսնում ենք, ն յօդը սեռականում բաց է թողնւում: Բացառականում, գործիականում և ներգոյականում ը յօդը շատ անգամ բաց է թողնւում:

Կան դիմորոշ յօդեր ս, դ, որոնք գործ ածւելով անունների հետ միասին, անխտիր մնում են բոլոր հոլովների վերջին:—Մատիտ-ս, մատիտ-դ, մատիտի-ս, մատիտի-դ, մատիտով-ս, մատիտով-դ, մատիտից-ս մատիտից-դ և այլն:

Բանական առարկաների անունները ս, դ, ն, (ը) յօդերով հայցականում ընդունում են տրականի վերջաւորութիւն (§ 13):

Ա Ն Կ Ա Ն Ո Ն Հ Ո Ւ Ո Վ Ո Ւ Մ

§ 19. Անկանոն կամ զարտուղի կոչւում է այն հոլովումը, որ դուրս է ընդհանուր կանոնից:

Անկանոն կերպով են փոփոխւում, օրինակ, օր, կին, քոյր, հայր, մայր, նոյնայր, տէր և այլն:

Անկանոն հոլովուող գոյականները եզակի սեռականում գլխաւորապէս ունեն՝ այ, ոջ, օ:

Եզակի

Ո. Հ.	օր	կին	հայր
Ս. Տ.	օր-աւյ	կն-ոջ	հ-օ-ը
Բ.	օրից (օրւանից)	կնոջից	հօրից
Պ.	օրով	կնոջով	հօրով
Ն.	օրում	կնոջում	հօրում

Յոգնակի

Ո. Հ.	օրեր	կանայք	հայրեր
Ս. Տ.	օրերի	կանանց	հայրերի
Բ.	օրերից	կանանցից	հայրերից
Պ.	օրերով	կանանցով	հայրերով
Ն.	օրերում	կանանցում	հայրերում

Օր բառի պէս հոլովւում են գլխաւորապէս ժամանակ ցոյց տւող անունները, օրինակ՝ տօրի, ամսո, ցերեկ, գիշեր և այլն:

Կին բառի պէս եզակի թւում հոլովւում են քոյր տէր, ընկեր, աներ, տալ և այլն:

Հայր բառի պէս են հոլովւում մայր, եղբար և այլն:

Անկանոն են հոլովւում սէր և Աստուած բառերը, որոնք դառնում են՝ սիրոյ, Աստուծոյ, սիրուց, Աստուծուց և այլն:

Մարդ եզակիում լինում է՝ մարդու, մարդուն, մարդով, իսկ յօգնակիում՝ մարդիկ, մարդկանց և այլն:

§ 20. Կան բառեր, որոնք հոլովւելիս՝ իրանց վերջին վանկի ձայնաւորը կամ բոլորովին կորցնում են կամ փոխւում:



Կորչող գրերն են ի, ու:—Գիրք—գրքի, օգուտ—  
օգտի:

Փոխող գրերն են է, իւ: Սրանցից  
է դառնում է ի:—Սէր—սիրոյ, տէր—տիրոջ:  
Իւ դառնում է յ:—Պատիւ—պատուի:

§ 21. ԳՈՅԱԿԱՆ ՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Յատուկ գոյական անունները միշտ սկսում  
են մեծատառով:—Թիֆլիս, Արաքս, Լիոն, Մարգարիտ:

2) Այն յատուկ անունները, որոնք ուղղականում  
վերջանում են ա, միւս հոլովներում ա-ից յետոյ ըն-  
դունում են յ:— Աննա—Աննա-յ-ի, Մոսկւա—Մոս-  
կւա-յ-ում:

3) Յ վերջացած անունները (փեսա-յ, երեխա-յ,  
քահանա-յ), երբ ընդունում են յօղ կամ յօգնակի թւի  
վերջաւորութիւն, կորցնում են յ գիրը:—Փեսա-ւ, ե-  
րեխա-ւ, քահանա-ւեր:

Բացառութիւն են կազմում միավանկ բառերը:—  
Հայ, հայր, հանր, թէյ, թէյս, թէյդ և այլն:

4) Անկանոն հոլովման եզ. սեռականում և տրա-  
կանում երբ լսում է ա, պէտք է գրել այ (ուայ):—  
Տար-ուայ, մայիս-ուայ:

5) Մի քանի անուններ յօգնակի ուղղականում  
եր կամ ներ վերջաւորութեան տեղ՝ կարող են ըն-  
դունել գրաբարի վերջաւորութիւնը՝ ջ, որ միւս հո-  
լովներում դառնում է ց:—Որդի-ջ, որդո-ց. հայ-ջ,  
հայո-ց, յոյն-ջ, յունա-ց:

Բացառութիւն է կազմում մարդիկ բառը, որ ուղ-  
ղականում ք-ի տեղ ունի կ:

6) Մի քանի անուններում ղ տառից յետոյ լսում  
է ա, բայց գրում է ք:—Աղ-ք-իւր, եղ-ք-այր, ող-ք:

7) Ը տառից յետոյ յաճախ լսում ենք փ, ք, թ,  
ց, չ, բայց գրում ենք ք, գ, ղ, ձ, ջ:—Օրինակ.

Լսում ենք

Գրում ենք

Սուր-փ

Սուր-ք

Մար-ք-իս

Մար-գ-իս

Մար-ք-արիտ

Մար-գ-արիտ

Մար-ք-արէ

Մար-գ-արէ

Մար-թ

Մար-ղ

Վար-թ

Վար-ղ

Չար-թ

Չար-ղ

Բար-ց

Բար-ձ

Մը-չ-իւն

Մը-ջ-իւն:

Կան բառեր, որոնց մէջ առանց ք տառի ազդե-  
ցութեան էլ լսում ենք ք, բայց գրում ենք գ:—Օ-գ-ուտ,  
թա-գ-աւոր:

ՀՈՒՈՎՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Եղակի	Ընդհանր	
—	Ի. Հ.	Եր, ներ
ի, ու, ան(եան)	Ս. Տ.	» » +ի
ից, ուց	Բ.	» » +ից
ով	Գ.	» » +ով
ում	Ն.	» » +ում



### ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

§ 22. Առարկանների որպիսութիւնը կամ յատկութիւնը ցոյց աւող բառերը կոչուում են *ածական անուն*։

Ածականները սովորաբար դնում են գոյականներից առաջ և պատասխանում են ինչպիսի՞ և ո՞ր հարցերին։— Բարի մարդ, մեծ քաղաք, ոսկէ մատանի, զարնանային անձրև։

Ածականները լինում են երկու տեսակ՝

1) *Որակական* (качественное)։— Բարի, մեծ։

2) *Յարաբնական* (относительное)։ — Ոսկէ, զարնանային։

Որակական ածականները ցոյց են տալիս առարկայի բնական որպիսութիւնը, իսկ յարաբերականները՝ մի առարկայի յարաբերութիւնը միւսի հետ։

### Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Ս Տ Ի Ճ Ա Ն Ն Ե Ր

§ 23. Որակական ածականներն ունեն երեք համեմատութեան աստիճաններ (степени сравнения)՝ 1) *դրական* (положительная), 2) *բաղդատական* (сравнительная) և 3) *գերադրական* (превосходная)։

1) *Դրական աստիճանը* ածականի սկզբնական ձևն է։— Արամը խելօք աշակերտ է։

2) *Բաղդատական աստիճանը* կազմւում է ա) *աւելի բառի կամ բ)* *բացառական հոլովի օգնութեամբ*։—

ա) Արամը *աւելի խելօք աշակերտ է, քան թէ Հայկը*։

բ) Արամը *Հայկից խելօք աշակերտ է*։

Աւելի բառը պահանջում է քան թէ։

Աւելի բառը գործ է ածւում և բացառական հոլովի հետ միասին։— Արամը Հայկից *աւելի խելօք է*։

3) *Գերադրական աստիճանը* կազմւում է *ամենամասնիկի կամ շատ, սաստիկ, անշափ, քոլորից, ամենից բառերի օգնութեամբ*։—

Արամը *ամենախելօք աշակերտ է*։

Արամը *շատ խելօք աշակերտ է*։

Արամը *քոլորից խելօք աշակերտ է*։

### Ա Ծ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ի Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ Ը

§ 24. Ածականները՝ գոյականի հետ վարւելիս՝ չեն փոփոխւում։ —

	Եզակի	Յոգնակի
Ո. Հ.	լաւ աշակերտ	լաւ աշակերտներ
Ս. Տ.	լաւ աշակերտի	լաւ աշակերտների
Բ.	լաւ աշակերտից	լաւ աշակերտներից
Գ.	լաւ աշակերտով	լաւ աշակերտներով
Ն.	լաւ աշակերտում	լաւ աշակերտներում



Միայնակ գործ ածուղ ածականները ընդունում են գոյականի միտք և հորովում են գոյականների Ս. հորովման պէս:—

Եզակի

Յոգնակի

Ո. Հ. լաւ

լաւ եր

Ս. Տ. լաւ-ի

լաւ-եր-ի

Բ. լաւ-ից

լաւ-եր-ից

Գ. լաւ-ով

լաւ-եր-ով

Ն. լաւ-ում

լաւ-եր-ում

§ 25. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Այն յարաբերական ածականները, որոնք ցոյց են տալիս առարկայի նիւթը, վերջանում են *ի, է (ևայ), նդէն*:—Արծաթ-ի, երկաթ-է, քար-նդէն:

2) Այն ածականները, որոնք գոյականների հետ միասին կազմում են մի յատուկ անուն, գրւում են մեծատառով:—Կարմիր ծով, Մեռնալ ծով, Նոր աշխարհ, Արա Գնդեցիկ:

3) Ածականների գերադրական աստիճանում ամենա մասնիկը գրւում է բառի հետ միասին:—Ամենաբարի, ամենալաւ, ամենասեւ:

Իսկ եթէ ամենա մասնիկի փոխարէն՝ լինում են ամենից, քոլորից, շատ և այլն, այն ժամանակ սրանք, իբրև առանձին բառեր, գրւում են շոկ:—Ամենից բարի, քոլորից լաւ:

## ԴԵՐԱՆՈՒՆ

§ 26. Այն բառերը, որոնք կատարում են գոյական և ածական անունների դեր, կոչւում են դերանուն:—*ես, դուք, այս, սա, որ*:

Դերանունները լինում են վեց տեսակ՝

1) Անձնական (личная)՝ *ես (առաջին դէմք), դու (երկրորդ դէմք), նա (երրորդ դէմք)*:

2) Յուցական (указательная)՝ *սա, դա, նա, այս, այդ, այն և այլն*:

3) Հարցական (вопросительная)՝ *ո՞վ՝ ի՞նչ, ո՞ր և այլն*:

4) Յարաբերական (относительное)՝ *որ*:

5) Որոշնալ (опредѣлительная)՝ *իրաքանչիւր, քոլոր, ամեն մէկ, ինքը և այլն*:

6) Անորոշ (неопредѣленная)՝ *ոչոք, ոչինչ, ոմն, մի քանի և այլն*:

Հայոց լեզւում չը կան ստացական (притяжательная) դերանուններ. սրանց տեղ գործ են ածւում *ես, դու ինքն* դերանունների սեռականը՝ *իմ, քո իւր*:

§ 27. Դերանուններն ունեն առանձին մասնիկներ՝ *ս, դ, ն (ը)*, որոնք կոչւում են դերանունական յոդեր:



Սրանցից *ս* ծառայում է առաջին դէմքին, ղ՝ երկրորդ, *ն* (*ը*)՝ երրորդ:

Դերանւանական յօդերը գործ են ածուում երեք տեսակ դերանունների տեղ.

1) Անձնական:—Վարժապետ-*ս*, աշակերտ-*ը* (այսինքն՝ *ես* վարժապետս, ղու աշակերտդ):

2) Ստացական:—Վարժապետ-*ս* աշակերտ-*ը*, (այսինքն՝ իմ վարժապետը, քո աշակերտը):

3) Ցուցական:—Վարժապետ-*ս*, աշակերտ-*ը* (այսինքն՝ այս վարժապետը, այդ աշակերտը):

Դ Ե Բ Ա Ն Ո Ի Ն Ն Ե Բ Ի Հ Ո Լ Ո Վ Ո Ի Մ Ը

§ 28. Անձնական դերանուններ.

Եզակի

Ո.	ես	դու	նա
Ս.	իմ	քո	նորա (նրա)
Տ.	Հ. ինձ	քեզ	նորան (նրան)
Բ.	ինձանից	քեզանից	նորանից (նրանից)
Գ.	ինձանով	քեզանով	նորանով (նրանով)
Ն.	ինձանում	քեզանում	նորանում (նրանում)

Յոգնակի

Ո.	մենք	դուք	նորանք (նրանք)
Ս.	մեր	ձեր	նորանց (նրանց)
Տ.	Հ. մեզ	ձեզ	նորանց (նրանց)
Բ.	մեզանից	ձեզանից	նորանցից (նրանցից)

Գ. մեզանով ձեզանով նորանցով (նրանցով)

Ն. մեզանում ձեզանում նորանցում (նրանցում)

Նորանք դերանունի տեղ երբեմն գործ է ածուում գրաբար ձեր՝ նոքա, նոցա, նոցանից և այլն:

§ 29. Իմ, քո, իւր դերանունները, երբ գոյականի հետ միասին են լինում, չեն փոփոխուում:—Իմ մատիտը, իմ մատիտի, իմ մատիտին, իմ մատիտից, իմ մատիտով, իմ մատիտները և այլն:

Իսկ երբ միայնակ են, ընդունում են ը որոշող մասնիկը և հոլովուում են գոյականների Ա հոլովման սլէս:

Եզակի

Յոգնակի

Ո.	Հ.	իմը	իմերը (իմոնք)
Ս.	իմի	իմերի (իմոնց)	
Տ.	իմին	իմերին (իմոնց)	
Բ.	իմից (ը)	իմերից (ը) (իմոնցից)	
Գ.	իմով (ը)	իմերով (ը) (իմոնցով)	
Ն.	իմում (ը)	իմերում (ը) (իմոնցում)	

Այսպէս են հոլովուում և քոնք, նրանք, ձերք, մերք, իրանք:

Իւր կամ իր դերանունը՝ ընդունելով որոշող մասնիկ՝ դառնում է իրանք:

§ 30. Ցուցական դերանունները *սա*, *դա*, *նա* գործ են ածուում մենակ և հոլովուում են նա անձնականի ձևով (§ 28):



Այս, այդ, այն սովորաբար գործ են ածուում գոյականների հետ միասին և չ'ունեն հոլովական վերջաւորութիւններ:

§ 31. Հարցական դերանունները ո՞վ, ի՞նչ միշտ գործ են ածուում մենակ և հոլովուում են.

Եզակի		Յոգնակի	
Ո.	ո՞վ	ինչ	ո՞վքեր
Ս.	ու՞մ	ինչի՞	ինչերի՞
Տ.	ու՞մ	ինչի՞	ինչերի՞
Հ.	ու՞մ	ինչ	ինչեր
Բ.	ու՞մից	ինչից	ինչերից
Գ.	ու՞մով	ինչով	ինչերով
Ն.	ու՞մում	ինչում	ինչերում

Ո՞ր գոյականի հետ միասին չի փոփոխուում, իսկ երբ մենակ է, ընդունում է ը մասնիկը և հոլովուում է.

Եզակի		Յոգնակի	
Ո.	որ՞ը	որո՞նք	
Ս.	որի՞	որո՞նց	
Տ.	որի՞ն	որո՞նց	
Հ.	որի՞ն, որը	որո՞նց	
Բ.	որից (ը)	որոնցից	
Գ.	որով (ը)	որոնցով	
Ն.	որում (ը)	որոնցում	

Որ, երբ մենակ է, գործ է ածուում և առանց ը մասնիկի:

§ 32. Յարաքերական դերանունը որ հոլովուում է հարցականի պէս, միայն առանց հարցական նշանների: — Որը, որի, որին և այլն:

§ 33. Որոշնալ դերանուններից իւրաքանչիւր, ամեն մէկ, ամեն, ըլլոր, երբ գոյականի հետ են, չեն հոլովուում. իսկ երբ մենակ են, հոլովուում են գոյականների Ս. հոլովման ձևով: — Իւրաքանչիւր, իւրաքանչիւրի, իւրաքանչիւրից և այլն:

Իւրաքանչիւր և ամեն մէկ յոգնակի թիւ. չ'ունեն: Ամեն, ըլլոր, թէպէտ յոգնականի միտք ունեն, բայց հոլովուում են եզակի:

Եզակի		Յոգնակի	
Ո.	ինքը	իրանք	
Ս.	իւր (իր, իրա)	իրանց	
Տ.	չ.	իրանց	
Բ.	իրանից	իրանցից	
Գ.	իրանով	իրանցով	
Ն.	իրանում	իրանցում	

§ 34. Անորոշ դերանուններից ոչ ոք, ոչինչ գործ են ածուում մենակ և հոլովուում են միայն եզակի թևում: — Ոչ ոք, ոչ ոքի, ոչ ոքից և այլն. ոչինչ, ոչնչի, ոչնչից և այլն:

Ոմն եզակի թևում չի հոլովուում, իսկ յոգնակաւում դառնում է ոմանք, ոմանց, ոմանցից և այլն:

Մի քանի բոլոր միւս հոլովներում ընդունում է ս մասնիկը: — Մի քանի, մի քանիսի, մի քանիսից և այլն:



§ 35. ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՌԻՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Մեր, ձեր բոլոր հոլովներում գրւում են ն-ով:—  
Մերի, ձերի, մերին, ձերին, մերից, ձերից, մերով,  
ձերով, և այլն:

Ե գրւում է և մենք, դուք անձնական դերա-  
նունների միւս հոլովներում:—Մեզ, ձեզ, մեզանից, ձե-  
զանից և այլն:

5) Ես, դու, մենք, դուք դերանունների բացա-  
ռական, գործիական և ներգոյական հոլովներից յաճախ  
դուրս է գցւում ա տառը:—Փոխանակ՝ ինձանով, քե-  
զանով, մեզանից, ձեզանից և այլն, կարելի է գրել՝  
ինձնով, քեզնով, մեզնից, ձեզնից և այլն:

3) Սա, դա, նա, սորա, դորա, նորա, սորա, դո-  
րա, նորա գրւում են առանց յ տառի (§ 2, ա.):

4) Հարցական դերանուններից ո՞վ գրւում է  
ո-ով (§ 2, գ):

ԹԻԱԿԱՆ ԱՆՈՒՆ

§ 36. Թւական անունները ցոյց են տալիս ա-  
ռարկաների քանակութիւնը կամ կարգը (դասը):

Քանակութիւն ցոյց տւող թւականները կոչւում են  
քանակական (КОЛИЧЕСТВЕННЫЕ) և պատասխանում են  
քանի՞ կամ ո՞րքան հարցերին. իսկ կարգ ցոյց տւող-  
ները՝ դասական (ПОРЯДКОВЫЯ) և պատասխանում են  
ո՞ր կամ ո՞րնորդ հարցերին:

Քանակական	Դասական
1. Մէկ, մի	Առաջին (մէկերորդ)
2. Երկու	Երկրորդ
3. Երեք	Երրորդ
4. Չորս	Չորրորդ
5. Հինգ	Հինգերորդ
6. Վեց	Վեցերորդ
7. Եօթը	Եօթներորդ
8. Ութ, ութը	Ութերորդ
9. Ինը	Իններորդ
10. Տասը	Տասներորդ
11. Տասնումէկ	Տասնումէկերորդ



12.	Տասներկու	Տասներկուերորդ
20.	Քսան	Քսաներորդ
21.	Քսանումէկ	Քսանմէկերորդ
30.	Երեսուն	Երեսուներորդ
40.	Քառասուն	Քառասուներորդ
50.	Յիսուն	Յիսուներորդ
60.	Վաթսուն	Վաթսուներորդ
70.	Եօթանասուն	Եօթանասուներորդ
80.	Ութսուն	Ութսուներորդ
90.	Ինըսուն	Ինըսուներորդ
100.	Հարիւր	Հարիւրերորդ
101.	Հարիւր մէկ	Հարիւրմէկերորդ
200.	Երկու հարիւր	Երկուհարիւրերորդ
1000.	Հազար	Հազարերորդ
1000000.	Միլիոն	Միլիոներորդ

Ինչպէս տեսնում ենք, քանակական թւակաները, ընդունելով ըստը (երկ-րորդ, եր-րորդ, չոր-րորդ) և երրորդ (հինգ-երորդ վեց-երորդ) վերջաւորութիւնները, դառնում են դասական:

Բացառութիւն է կազմում առաջին բառը:

Քանակական թւականերին պատկանում են նաև մասնական թւականները՝ կէս, քառորդ, մէկ հինգերորդական, երեք ասաներորդական և այլն:

Թւերի մրաւորների կարգը ցոյց տուող թւականները վերջանում են աւոր:—Մի-աւոր, հարիւր-աւոր, հազար-աւոր:

§ 37. Թւական անունները, երբ գոյականի հետ միասին են, չեն հորովւում:—Հինգ աշակերտ, հինգ աշակերտի, հինգ աշակերտից և այլն:

Թւական անունները, երբ առանց գոյականի են, հորովւում են գոյականների Ս հորովման ձևով:—Հինգ, հնգի, հնգից և այլն: Հինգերորդ, հինգերորդի, հինգերորդից և այլն:

Ամսաթիւ և տարեթիւ ցոյց տուող թւականները լինում են քանակական:—Մայիսի քսանումէկին: Հազար ինը հարիւր չորս թւին:

### § 38. Թ Ի Ա Կ Ա Ն Ն Ե Բ Ի Ո Ի Ղ Ղ Ա Գ Բ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

- 1) Թւական անուններից մէկ գրւում է է-ով:
- 2) Երկու հորվւելիս՝ ընդունում է ս տառը՝ երկու-ս-ի, երկու-ս-ից, երկու-ս-ով, երկու-ս-ում:
- 3) Եօթը և ութը հորվւելիս՝ կորցնում են ը տառը՝ եօթի, ութի, եօթից, ութից և այլն:
- 4) Ինը և տասը հորվւելիս՝ ը տառը փոխում են ն-ի՝ ին-ն-ի, տաս-ն-ի, ին-ն-ից, տաս-նի-ց և այլն:
- 5) Երրորդ և չորրորդ թւականներում գրւում են երկու ր, իսկ միւս բոլոր թւականներում՝ մէկ ր:—Հինգերորդ, վեցերորդ, տասներորդ, հարիւրերորդ և այլն:
- 6) Առաջին գրւում է ջ-ով, թէպէտ լւում է չ:



Բ Ա Յ

§ 39. Առարկաների գործողութիւնը կամ դրու-  
թիւնը ցոյց տուող բառերը կոչուում են ըայ:—Ուսու-  
ցիչը պատմում է (գործողութիւն): Աշակերտը նստած  
է (դրութիւն):

Ս Ե Ռ

§ 40. Բայերն ունեն երեք սեռ (залогъ)՝ 1) ներ-  
գործական (дѣйствительный), 2) կրատրական (стра-  
дательный) և չէզոք (средній):

1) Ներգործական բայը ցոյց է տալիս այնպիսի  
գործողութիւն, որ գլխաւոր առարկայից անցնում է  
երկրորդականին:—Կայէնը (գլխ. առ.) սպանեց Աբէ-  
լին (երկր. առ.),

2) Կրատրական բայը ցոյց է տալիս այնպիսի  
գործողութիւն, որ մի առարկայ կրում է ուրիշ առար-  
կայից:—Աբէլը սպանւեց Կայէնի ձեռքով:

Կրատրական սեռը միշտ ծագում է ներգործակա-  
նից, ընդունելով լ (ո) մասնիկը:

3) Չէզոք բայը ցոյց է տալիս առարկայի դրու-

թիւնը կամ այնպիսի գործողութիւն, որ մնում է գոր-  
ծող առարկայի մէջ:—Երեխան ընած է: Աշակերտը  
գնում է:

Ե Ղ Ա Ն Ա Կ

§ 41. Բայերն ունեն հինգ եղանակ (наклонение)՝  
1) անորոշ (неопредѣленное), 2) սահմանական (изъя-  
вительное), 3) հրամայական (повелительное), 4)  
պայմանական (условное) և 5) ստորադասական (со-  
слагательное):

1) Անորոշ եղանակը բայի սկզբնական ձևն է և  
վերջանում է՝ նլ (երգ-նլ, աս-նլ), ալ (ժպտ-ալ, կար-  
դ-ալ), անալ, (հասկ-անալ, իմ-անալ):

Կան բայեր (գլխաւորապէս չէզոք), որոնք անո-  
րոշ եղանակում վերջանում են իլ, (նստ-իլ, ապր-իլ յոգ-  
ն-իլ). բայց մեր այժմեան աշխարհաբար լեզուում այդ  
վերջաւորութեան տեղ գործ է ածուում և ել:

2) Սահմանական եղանակն որոշ պատմում է՝  
թէ ո՞վ և ե՞րբ է կատարում գործողութիւնը:—Սո-  
խակը երգում է: Աշակերտը կարդաց: Ես կը գրեմ:

3) Հրամայական եղանակն արտայայտում է հրա-  
ման, խնդիր կամ խորհուրդ:—Կարդա՛, այ իմ խելօք  
մանուկ:

4) Պայմանական եղանակը ցոյց է տալիս այն-  
պիսի գործողութիւն, որ կարող էր կատարել, բայց  
մի որևիցէ պատճառով չի կատարել:—Կը կարդայի,  
թէ ժամանակ ունենայի:

5) Ստորադասական եղանակն արտայայտում է



կասկած կամ ցանկութիւն գործողութեան կատար-  
ւելու մասին:—Եթէ գնամ: Որ աէսնէի:

## Ժ. Ա. Մ. Ա. Ն. Ա. Կ

§ 42. Ժամանակը (время) երեք է՝ 1) ներկայ (настоящее), 2) անցեալ (прошедшее) և 3) ապառ-  
նի (будущее):

1) Ներկայ ժամանակը ցոյց է տալիս այնպիսի  
գործողութիւն, որ կատարուած է այժմ:—Գրուած էմ:

2) Անցեալ ժամանակը ցոյց է տալիս անցած  
գործողութիւնը: Անցեալը լինում է՝

ա) Անկատար (несовершенное):—Գրուած էի:

բ) Կատարեալ (совершенное):—Գրեցի:

գ) Պայմանական (условное):—Կը գրէի:

դ) Ստորադասական (составительное):—Եթէ  
գրէի, որ գրէի:

Կան նաև՝

Վաղակատար (предварительное прошедшее):—Գրել  
եմ, գրած եմ:

Գերակատար (давнепрошедшее):—Գրել էի, գրած էի:

3) Ապառնի ժամանակը ցոյց է տալիս այնպիսի  
գործողութիւն, որ պիտի կատարուի յետոյ:

Ապառնին լինում է՝

ա) Սահմանական:—Կը գրեմ, պիտի գրեմ:

բ) Ստորադասական:—Եթէ գրեմ, որ գրեմ:

## Կ Է Մ Ք

§ 43. Բայերն ունեն երեք դէմք (лицо)՝ առա-  
ջին (ես գրում եմ), երկրորդ (դու գրում ես) և եր-  
րորդ (նա գրում է):

## Թ Ի Ի

§ 44. Բայերն ունեն երկու թիւ՝ եզակի (գրում  
եմ, գրում ես, գրում է) և յոգնակի (գրում ենք,  
գրում էք, գրում են):

## Դ Ե Ր Բ Ա Յ

§ 45. Բայերից կազմուած են չորս տեսակ ղեր-  
բայ (причастіе)՝ 1) անորոշ, 2) ներկայ 3) անցեալ  
և 4) ապառնի:

1) Անորոշ գերբայը բայի սկզբնական ձևն է և  
ունի անորոշ եղանակի վերջաւորութիւնները՝ նլ, ալ,  
անալ:

Անորոշ գերբայը հայոց լեզուում հոլովուած է գոյա-  
կանների Բ հոլովման պէս:—Գրել, գրելու, գրելուց,  
գրելով, գրելում:

Անորոշ գերբայը, ընդունելով իւ վերջաւորու-  
թիւնը, ցոյց է տալիս ժամանակ:—Գրել-իս (այսինքն՝  
գրելու ժամանակ):

2) Ներկայ գերբայը վերջանում է ող:—Գր-ող:



Այս ձևը, իբրև բայից կազմած ածական, գոյականի հետ վարւելիս՝ չի փոփոխուում:—Գրող աշակերտ, գրող աշակերտի, գրող աշակերտից, գրող աշակերտներ և այլն:

Իսկ երբ գործ է ածուում առանձին, հոլովուում է գոյականների Ա հոլովման պէս:—Գրող, գրողի, գրողին, գրողներ և այլն:

3) Անցեալ դերբայը վերջանում է ած. կամ Նլ:—  
Գր-ած, կարգաց-Նլ:

Անցեալ դերբայը, գործ ածւելով եմ և էի բայի հետ, կազմուում է վաղակատար (գրած եմ, գրել եմ) և զերակատար (գրած էի, գրել էի) ժամանակները:

Ած վերջացած դերբայները, գործ ածւելով կը լինէի, լինէի և լինեմ բայի հետ, կազմուում են պայմանական և ստորադասական եղանակների բարդ ձևերը:—Գրած կը լինէի (պայման.): Եթէ գրած լինէի (ստորադաս.): Եթէ գրած լինեմ (ստորադաս.):

Կը, որ, եթէ, թէ, եթէ որ, թէ որ, դնուում են բայից առաջ:

Ած վերջացած դերբայը, իբրև ածական, գոյականի հետ վարւելիս՝ չի փոփոխուում. իսկ մենակ՝ հոլովուում է գոյականների Ա հոլովման պէս:—Գրած, գրածի, գրածից, գրածով, գրածներ և այլն:

4) Ապառնի դերբայը վերջանում է ու:—Գրել-ու:

Ապառնի դերբայը, գործ ածւելով էի և եմ բայի հետ, կազմուում է անկատար և ապառնի ժամանակներ:—Կարդալու էի: Կարդալու եմ:

Ապառնի դերբայը, գործ ածւելով լինէի և լինեմ բայի հետ, կազմուում է ստորադասական եղանակի անկատարը և ապառնին:—Գրելու լինէի: Գրելու լինեմ:

§ 46. Բ Ա Յ Ի Չ Ե Ի Ե Ի Ի Կ Ա Ջ Մ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

գրում գրել գրած գրելու	եմ, ես, է, ենք, էք, են էի, էիր, էր, էինք, էիք, էին
Գր+	(կը, պիտի, եթէ, որ) եմ, ես, է, ենք, էք, են էի, էիր, էր, էինք, էիք, էին
	եցի, եցիր, եց, եցինք, եցիք, եցին իր, եցէք
	ող
	ելիս

Ե Ո Ն Ա Ր Հ Ո Ի Մ

§ 47. Բայի փոփոխումը եղանակներով, ժամանակներով և թւերով կոչուում է խոնարհում (спряжение):

Բայերն ունեն երեք խոնարհում, որոնք որոշուում են անորոշ եղանակի վերջաւորութիւններով.

- Ա խոնարհում՝ Նլ:—Սօս-Նլ, երգ-Նլ:
- Բ խոնարհում՝ ալ:—Կարգ-ալ, խնդ-ալ:
- Գ խոնարհում՝ անալ:—Իմ-անալ, զարմ-անալ:

Ե Մ և Լ Ի Ն Ե Լ Բ Ա Յ Ե Ի Ը

§ 48. Եմ և լինել բայերը կատարւում են երկու



տեսակ պաշտօն՝ 1) կամ ցոյց են տալիս առարկայի էութիւնը կամ գոյութիւնը, 2) կամ օգնում են միւս բայերը խոնարհելու: Առաջին դէպքում այդ բայերը կոչուում են էական (ես եմ, դու կը լինես), իսկ երկրորդ դէպքում՝ օժանդակ կամ օգնական (գրում եմ, կարդացած կը լինես):

Եմ բայը պակասաւոր է, որովհետեւ ունի միայն երկու ժամանակ՝ սահմանականի ներկան և անկատարը:

Ն Ե Ր Կ Ա Յ

Եզակի            Եմ,     Ես,     Է,  
Յոգնակի        Ենք,   Էք,   Էն:

Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Եզակի            Էի,     Էիր,   Էր,  
Յոգնակի        Էինք, Էիք,   Էին:

Եմ բայի պակաս ձևերը լրացնում է լինել պակասաւոր բայը. իսկ սորա պակաս ձևերը լրացնում է եղանիմ բայը:

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Ն Ե Ր Կ Ա Յ

լինում եմ,        լինում ես,     լինում է,  
լինում ենք,      լինում էք,    լինում են:

Ա Ն Կ Ա Տ Ա Ր

լինում էի,        լինում էիր,   լինում էր,  
լինում էինք,    լինում էիք,   լինում էին:

Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

եղայ,            եղար,        եղաւ,  
եղանք,        եղաք,        եղան:

Ա Ն Յ Ե Ա Լ

ա) պայմանական

բ) ստորադասական

կը, պիտի՝

եթէ, որ՝

լինէի,            լինէիր,       լինէր,  
լինէինք,        լինէիք,       լինէին:

Ա Պ Ա Ռ Ն Ի

ա) սահմանական

բ) ստորադասական

կը, պիտի՝

եթէ, որ՝

լինեմ,            լինես,        լինի (լինէ)  
լինենք,          լինէք,        լինեն:

Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

եղիր,  
եղէք:

Դ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ՝ լինել  
Ներկայ՝ եղող  
Անցեալ՝ եղած, եղել  
Ապանի՝ լինելու:



Ա. ԽՈՒՆԱՐՀՈՒՄ

(ԵԼ)

§ 49.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ր Կ Ա Յ

խօսում եմ, խօսում ես, խօսում է,  
խօսում ենք, խօսում էք, խօսում են:

Ա Ն Կ Ա Տ Ա Ր

խօսում էի, խօսում էիր, խօսում էր,  
խօսում էինք, խօսում էիք, խօսում էին:

Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

խօսեցի, խօսեցիր, խօսեց,  
խօսեցինք, խօսեցիք, խօսեցին:

Ա Ն Ց Ե Ա Լ

ա) սայմանական

բ) ստորադասական

կը, պիտի՝

եթէ, որ՝

խօսէի, խօսէիր, խօսէր,  
խօսէինք, խօսէիք, խօսէին:

Ա Պ Ա Ռ Ն Ի

ա) սահմանական

բ) ստորադասական

կը, պիտի

եթէ, որ՝

խօսեմ, խօսես, խօսի (խօսէ),  
խօսենք, խօսէք, խօսեն:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

խօսիր,  
խօսեցէք:

Դ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ՝ խօսել,  
Ներկայ՝ խօսող,  
Անցեալ՝ խօսած, խօսել,  
Ապանի՝ խօսելու:

Բ ԽՈՒՆԱՐՀՈՒՄ

(աԼ)

§ 50.

Ն Ե Ր Կ Ա Յ

կարդում եմ, կարդում ես, կարդում է,  
կարդում ենք, կարդում էք, կարդում են:

Ա Ն Կ Ա Տ Ա Ր

կարդում էի, կարդում էիր, կարդում էր,  
կարդում էինք, կարդում էիք, կարդում էին:

Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

կարդացի, կարդացիր, կարդաց,  
կարդացինք, կարդացիք, կարդացին



Ա Ն Յ Ե Ա Լ

ա) պայմանական

բ) ստորադասական

կը, պիտի՝

եթէ, որ՝

կարգայի,

կարգայիր,

կարդար,

կարգայինք,

կարգայիք,

կարգային:

Ա Պ Ա Ռ Ն Ի

ա) սահմանական

բ) ստորադասական

կը, պիտի՝

եթէ, որ՝

կարգամ,

կարգաս,

կարգայ,

կարգանք,

կարգաք,

կարգան:

Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

կարդա՛,

կարդացե՛ք:

Գ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ՝ կարդալ

Ներկայ՝ կարդացող

Անցնալ՝ կարդացած, կարդացել

Ապառնի՝ կարդալու:

Գ Ե Ռ Ն Ա Ր Հ Ո Ի Մ

(անալ)

§ 51.

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Ն Ե Ր Կ Ա Յ

հասկանում եմ,

հասկանում ես,

հասկանում է,

հասկանում ենք,

հասկանում էք,

հասկանում են:

Ա Ն Կ Ա Տ Ա Ր

հասկանում էի,

հասկանում էիր,

հասկանում էր,

հասկանում էինք,

հասկանում էիք,

հասկանում էին:

Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

հասկացայ,

հասկացար,

հասկացաւ,

հասկացանք,

հասկացաք,

հասկացան:

Ա Ն Յ Ե Ա Լ

ա) պայմանական

բ) ստորադասական

կը, պիտի՝

եթէ, որ՝

հասկանայի,

հասկանայիր,

հասկանար,

հասկանայինք,

հասկանայիք,

հասկանային:



Ա Պ Ա Ռ Ն Ի

ա) սահմանական

բ) ստորադասական

կը, պիտի՝

եթէ, որ՝

հասկանամ,  
հասկանանք,

հասկանաս,  
հասկանաք,

հասկանայ,  
հասկանան:

Գ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ՝ հասկանալ  
Ներկայ՝ հասկացող  
Անցեալ՝ հասկացած, հասկացել  
Ապասնի՝ հասկանալու:

Կ Ր Ա Ի Ռ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Յ Ե Ր

§ 52. Բոլոր ներգործական բայերը, ընդունելով Լ (ու), դառնում են կրաւորական (§ 40) և խոնարհւում են ներգործական բայերի պէս:—Գրւում եմ, գրւում էի, գրեցի, կը գրեմ և այլն:

Բ Ա Յ Ա Ս Ա Կ Ա Ն Բ Ա Յ Ե Ր

§ 53. Ամեն մի բայ ընցասական (отрицательный) դարձնելու համար սկզբից աւելացնում ենք չը կամ չ:—Չը խօսել. չեմ խօսում:

Բացասական բայի ձևերը կազմելու համար կարևոր է գիտենալ նմ պակասաւոր բայի բացասականը:

Ն Ե Ր Կ Ա Յ

Եզակի չեմ, չես, չի (չէ)  
Յոգնակր չենք, չէք, չեն:

Ա Ն Կ Ա Ս Ա Ր

Եզակի չէի, չէիր, չեր,  
Յոգնակի չէինք, չէիք, չէին:

§ 54. Բացասական բայերը խոնարհւում են հետևեալ ձևով.

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Ն Ե Ր Կ Ա Յ

չեմ խօսում, չես կարդում, չի հասկանում,  
չենք խօսում, չէք կարդում, չեն հասկանում:

Ա Ն Կ Ա Ս Ա Ր

չէի խօսում, չէիր կարդում, չեր հասկանում,  
չէինք խօսում, չէիք կարդում, չէին հասկանում:

Կ Ա Ս Ա Ր Ե Ա Լ

չը խօսեցի, չը կարդացիր, չը հասկացաւ,  
չը խօսեցինք, չը կարդացիք, չը հասկացան:



Ա Ն Յ Ե Ա Լ

ա) պայմանական

բ) ստորադասական

պիտի՝

եթէ, որ՝

չը խօսէի, չը կարդայիր, չը հասկանար,  
չը խօսէինք, չը կարդայիք, չը հասկանային:

կամ

չէի խօսիլ

չէիր կարդալ

չէր հասկանալ...

Ա Պ Ա Ռ Ն Ի

ա) սահմանական

բ) ստորադասական

պիտի՝

եթէ, որ

չը խօսեմ, չը կարդաս, չը հասկանայ,  
չը խօսենք, չը կարդաք, չը հասկանան:

կամ

չեմ խօսիլ,

չես կարդալ,

չի հասկանալ...

Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

մի խօսիլ (խօսիր), մի կարդալ (կարդար)...  
միք խօսիլ (մի խօսէք), միք կարդալ (մի կարդաք)...

Գ Ե Ր Բ Ա Յ

Ատորոշ՝ չը խօսել, չը կարդալ, չը հասկանալ  
Ներկայ՝ չը խօսող, չը կարդացող, չը հասկացող  
Անցեալ՝ չը խօսած, չը կարդացած, չը հասկացած  
Ապառնի՝ չը խօսելու, չը կարդալու, չը հասկանալու:

Գ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր Ի Յ Կ Ա Չ Մ Ի Ա Ն Բ Ա Ղ Ա Ռ Ի Ն Ա Լ Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ն Ե Ր

§ 55. Ժամանակները դերբայներից կազմուած են եմ և լինել պակասաւոր բայերի օգնութեամբ: Դերբայներից կազմած ժամանակներն են՝

Վաղակատար

Ոստած (խօսել) { եմ, ես, է, ենք, էք, են:  
Հասկացած (հասկացել)  
Կարդացած (կարդացել)

Գերակատար

Ոստած (խօսել) { էի, էիր, էր, էինք, էիք, էին:  
Կարդացած (կարդացել)  
Հասկացած (հասկացել)

Ապառնի

Ոստելու { եմ, ես, է, ենք, էք, են:  
Կարդալու  
Հասկանալու

Անցեալ-ապառնի

Ոստած { կը լինիմ, կը լինիս, կը լինի և այլն:  
Կարդացած  
Հասկացած

Անցեալ պայմանական

Ոստած { կը լինէի, կը լինէիր, և այլն:  
Կարդացած  
Հասկացած



Կատարեալ ստորադասական  
եթէ, որ՝

Խօսած  
Կարգացած  
Հասկացած

{ լինիմ, լինիս, լինի և այլն:

Գերակատար ստորադասական  
եթէ, որ՝

Խօսած  
Կարգացած  
Հասկացած

{ լինէի, լինէիր, լինէր և այլն:

ԱՆՅՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐ

§ 56. Անցողական կոչւում են այն բայերը, որոնք ցոյց են տալիս ուրիշին մի բան կատարել տալը:

Կան ներգործական բայեր, որոնց կարելի է անցողական դարձնել, եթէ նրանց արմատին աւելացնենք ցնել մասնիկը ա կամ ս յօդակապով:—Կարգալ՝ կարգ-ա-ցնել: Խօսել՝ խօս-ն-ցնել:

Ներգործական բայը տալ բայի հետ միասին կարող է գործ ածւել անցողականի տեղ:—Կարգալ տալ, մոռանալ տալ:

Իսկ եթէ տալ բայն աւելացնենք անցողական բային, կը ստանանք կրկին անցողական:—Կարգացնել տալ, խօսեցնել տալ:

Չէզոք բայը, ընդունելով իր արմատի վրայ ցնել մասնիկը, դառնում է ներգործական:—Նստել (չէզոք)—նստեցնել (ներգործ.):

Անցողական բայերը խոնարհում են Ա խոնարհման պէս, միայն կատարեալ ժամանակում և անցեալ դերբայում ցնել մասնիկի ն տառը փոխւում է ը (կարգա-ցըի, կարգա-ցըել կամ կարգա-ցըած). իսկ հրամայականում՝ բացի այդ փոփոխումից՝ վերջում աւելանում է և ու (կարգա-ցրու):

ԱՆԿԷՄ ԲԱՅԵՐ

§ 57. Անդէմ (бизличный) կոչւում են այն բայերը, որոնք գործ են ածւում միայն եզակի երրորդ դէմքով:—Պէտք է, հարկ է, բաւական է, ամօթ է, վայել է և այլն:

Կան չէզոք և կրաւորական բայեր, որոնք գործ են ածւում անդէմի մտքով:—Երևում է, թւում է, մնում է, աււում է, լւում է և այլն:

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

§ 58. Այն բայերը, որոնք շեղւում են խոնարհումների ընդհանուր կանոնից, կոչւում են անկանոն (неправильный):

Անկանոն են՝

1) նել, նալ, չել վերջացած բայերը, որոնք կատարեալում, հրամայականում և անցեալ դերբայում կորցնում են ն և չ տառերը:—

Գտ-նել, գտայ, գտիր, գտել (գտած):

Դառ-նալ, դարձայ, դարձիր, դարձել (դարձած):

Փախ-չել, փախայ, փախիր, փախել (փախած):



Տես-նել, տեսայ, տես, տեսել (տեսած)  
 Մտ-նել, մտայ, մտիր, մտել (մտած)  
 Լի-նել, եղայ, եղիր, եղել (եղած)  
 Տա-նել, տարայ, տար, տարել (տարած)  
 Իջ-նել, իջայ, իջիր, իջել (իջած)  
 Հաս-նել, հասայ, հասիր, հասել (հասած)  
 Անց-նել, անցայ, անցիր, անցել (անցած)  
 Մեռ-նել, մեռայ, մեռիր, մեռել (մեռած)  
 Հեծ-նել, հեծայ, հեծիր, հեծել (հեծած)  
 Բուս-նել, բուսայ, բուսիր, բուսել (բուսած)  
 Հագ-նել, հագայ, հագիր, հագել (հագած)  
 Ընկ-նել, ընկայ, ընկիր, ընկել (ընկած)  
 Բա-նալ, բացի, բաց, բացել (բացած)  
 Լա-նալ, լացի, լաց, լացել (լացած)  
 Թո-չել, թոայ, թոիր, թոել (թոած)  
 Փլ-չել, փլայ, փլիր, փլել (փլած)  
 Կոր-չել, կորայ, կորիր, կորել (կորած)  
 Կպ-չել, կպայ, կպիր, կպել (կպած):

2) Գալ և ուտել բայերը, որոնց կատարեալը, հրամայականը, ներկայ և անցեալ զերբայը կազմուում են ուրիշ արմատից:

Գ Ա Լ

Կատ. եկայ, եկար, եկաւ, եկանք, եկաք, եկան:  
 Հրամ. եկ (արի), եկէք:  
 Դերբ. ներկայ՝ եկող: Դերբ. անցեալ՝ եկել (եկած):

Ո Ւ Տ Ե Լ

Կատ. կերայ, կերար, կերաւ, կերանք, կերաք, կերան:

Հրամ. կեր, կերէք:

Դերբ. ներկայ՝ ուտող: Դերբ. անցեալ՝ կերել (կերած):

3) Լալ և տալ բայերը, որոնց սահմանականի ներկան և անկատարը՝ ում վերջաւորութեան փոխանակ՝ անորոշ զերբայի վրայ ընդունում են իս:— Լալ-իս եմ, տալ-իս եմ: Լալ-իս էի, տալ-իս էի:

Սահմանականի ներկայում և անկատարում նոյն իս վերջաւորութիւնը ընդունում է և զալ բայը:— Գալ-իս եմ, գալ-իս էի:

4) Ուննալ և զիտնալ բայերը, որոնց սահմանականի ներկան և անկատարը գրաբար ձևով է լինում.

Ներկայ	{	Ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիր,
		ունիրն:
	{	Գիտեմ, զիտես, զիտէ, զիտենք, զիտէք,
		զիտեն:

Անկատ.	{	Ունէի, ունէիր, ունէր, ունէինք, ունէիր,
		ունէիրն:
	{	Գիտէի, զիտէիր, զիտէր, զիտէինք, զիտէիր,
		զիտէիրն:

5) Կամ պակասաւոր բայը, որ գործ է ածւում գրաբարի ձևով և ունի միայն սահմանականի ներկայ և անկատար ժամանակները.

Ներկայ՝ կամ, կաս, կայ, կանք, կաք, կամ:



Անկատ՝ կայի, կայիր, կար, կայինք, կայիք,  
կային:

§ 59. Բ Ա Յ Ե Ր Ի Ո Ի Ղ Ղ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ը

1) Եմ բայի եզակի երրորդ և յոգնակի երկրորդ  
դէմքը ներկայում գրւում է է-ով:—Նա է, կարգում  
է: Դուք էք, կարգում էք:

Ներկայի միւս ձևերում, թէպէտ լսում է է, բայց  
գրւում է ն:—Ես նմ, կարգում նմ: Դու նս, կար-  
գում նս: Մեն ննք, կարգում ննք: Նրանք նն, կար-  
գում նն:

2) Եմ բայի անկատարի բոլոր ձևերը գրւում են  
է-ով:—Էի, էիր, էր, էինք, էիք, էին:

3) Ել վերջացած բայերի կատարեալի բոլոր ձևե-  
րը գրւում են ն-ով:—Գրնցի, գրնցիր, գրնց, գրն-  
ցինք, գրնցիք, գրնցին:

4) Անալ վերջացած բայերի անցեալ կատարեալի  
եզ. առաջին դէմքում լսւում է ցա, բայց գրւում է  
ցայ (հասկա-ցայ). իսկ երրորդ դէմքը վերջանում է  
ցաւ (հասկա-ցաւ):

5) Կը մասնիկը գրւում է բայից ջոկ և խառը:—  
Կը գրեմ, կը գրէի:

Իսկ երբ բայը ձայնաւոր տառով է սկսւում, կը  
մասնիկի ը տառը բաց է թողնւում և նրա տեղ  
գնւում է ապաթարց (') նշանը:—Կ'ասեմ, կ'երթայի:

6) Ել վերջացած բայերի ստորադասական ապառ-  
նին իր վերջում ընդունում է նմ բայի ներկայի ձևե-  
րը:—(Որ, եթէ) գրնմ, գրնս, գրէ (գրի), գրննք,  
գրէք, գրեն:

Իսկ ստորադասական և պայմանական անկատարը  
ընդունում է նոյն նմ բայի սահմանական անկատարի  
ձևերը:—(Որ, եթէ կը, պիտի) գրէի, գրէիր, գրէր,  
գրէինք, գրէիք, գրէին:

7) Ալ և անալ վերջացած բայերի ապառնին ե-  
զակի երրորդ դէմքում վերջանում է այ:—Նա կար-  
գայ, հասկանայ:

8) Վերևի ուղղագրութեան հետ չը պէտք է շփո-  
թել ալ վերջացած բայերի հրամայականը, որ եզա-  
կիում վերջանում է ա շեշտով, առանց յ տառի:—  
Կարգո՛ւ, գնա՛:

Հրամայականի յոգնակին բոլոր բայերի համար  
ընդում է էք վերջաւորութիւնը շեշտով:—Գրեցէ՛ք,  
կարդացէ՛ք, հասկացէ՛ք:

9) Ներկայ դերբայի վերջում թէպէտ լսւում է  
ող, բայց գրւում է ող:—Գրող, կարդացող:

10) Չը մասնիկը գրւում բայից ջոկ և խառը:—  
Չը գրել, չը գրեցի:

Իսկ երբ բայը սկսւում է ձայնաւորով, չը մաս-  
նիկի ը տառը բաց է թողնւում և նրա տեղ գնւում  
է ('):—Չ'ասել, չ'ասացի:

Ներկայում և անկատարում չ՝ միանալով նմ բա-  
յի հետ, գրւում է առանց ('):—Չեմ, չես, չէ, (չի)  
չենք, չեք, չեն, չէի, չէիր, չէր, չէինք, չէիք, չէին:

11) Բաղադրեալ բայ կազմող բառերը գրւում են  
միմեանցից ջոկ:—Պար գալ, կուլ տալ, ձայն տալ,  
աչք ածել:

12) Բարդ բայ կազմող բառերը միանում են մի-  
մեանց հետ ա յօդակապով:—Պատւասիրել, վարձատրել:



## Մ Ա Կ Բ Ա Յ

§ 60. Առարկաների գործողութեան կամ դրու-  
թեան հանգամանքները ցոյց տուող բառերը կոչուում  
են մակրայ:

Մակրայները լինում են՝

1) Տեղական՝ ուր, որտեղ, հեռու, մօտիկ, այս-  
տեղ, այնտեղ, վերև, ներքև, ներսը, դուրսը և այլն:

2) Ժամանակական՝ երբ, այժմ, յետոյ, այսօր,  
երեկ, վաղուց, երբեմն, երբեք, միշտ և այլն:

3) Որակական՝ ինչպէս, այսպէս, այդպէս, այն-  
պէս, սաստիկ, սիրով, եղբայրաբար, հայերէն և այլն:

4) Զաննակական՝ որչափ, ինչքան, այսքան, այդ-  
քան, այնքան, շատ, սակաւ, քիչ և այլն:

Շատ մակրայներ առաջ են եկած ա) գոյական-  
ներից, բ) ածականներից և գ) գերանուններից:

ա) Գոյականներից առաջ եկած մակրայները, ե-  
թէ տեղական են, կարող են հոլովել Ա հոլովման  
պէս:—Վերև, վերևի, վերևից, վերևով և այլն:

բ) Ածականները, բայի վերայ գնւելով՝ դառնում  
են մակրայ:—Լաւ երգել, բարձր խօսել, խոր մտածել:

Որակական ածականներից առաջ եկած մակրայ-  
ները ունին համեմատութեան աստիճաններ:—Լաւ եր-  
գել, աւելի լաւ երգել, ամենից լաւ երգել:

գ) Դերանուններից կազմւած մակրայները, ըն-  
դունելով պէս վերջաւորութիւնը, ունենում են գոր-  
ծիական հոլով:—Այսպէս—այսպիսով:

## § 61. Մ Ա Կ Բ Ա Յ Ն Ե Բ Ի Ո Ի Ղ Վ Ա Գ Բ Ո Թ Ի Ի Ն Ը

1) Եմն վերջացած մակրայները գրւում են ն-ով:—  
ուրեմն, երբեմն:

Իսկ երբեք գրւում է է-ով:

2) Երէն վերջաւորութեան մէջ ձայնաւորներից  
առաջինը լինում է ն, իսկ երկրորդը՝ է:—Հայերէն,  
ուսուրէն:

3) Պէս վերջացած մակրայները գրւում են է-ով:  
Վերջապէս, բարոյապէս, դառնապէս:

## Ն Ա Մ Ա Ղ Գ Ր Ո Թ Ի Ի Ն Ե Ի Յ Ե Տ Ա Գ Բ Ո Թ Ի Ի Ն

§ 62. Այն հոլովառու բառերը, որոնք ցոյց են  
տալիս առարկաների փոխադարձ յարաբերութիւնը,  
կոչուում են նախադրութիւն և յետադրութիւն:—

Աշակերտը գնաց դէպի (նախադր.) տուն:

Հայրը գնաց որդու համար (յետադր.) մի գիրք:

Նախադրութիւնը դասուում է հոլովական բառից

առաջ, իսկ յետադրութիւնը՝ հոլովական բառից յետոյ:

Նախադրութիւններ՝ առանց, դէպի, մինչև, բացի...

Յետադրութիւններ՝ համար, հետ, մօտ, մէջ...

Յետադրութիւններից մի քանիսը հոլովում է  
գոյականների Ա հոլովման օրինակով:—

Մէջ, միջի, միջից, միջով, մէջերը և այլն:

Տակ, տակի, տակից, տակով, տակերը և այլն:

Վրայ, վրայի, վրայից, վրայով, վրաները և այլն:



Կան բառեր, որոնք կարող են լինել և յետադրու-  
թիւն և մակբայ: Եթէ բառը գոյականի մօտ է  
զրուած, յետադրութիւն է, իսկ եթէ բայի մօտ է՝  
մակբայ է:

Սեղանի վրայ (յետադր.) գիրք է գրած:

Գիրքը գրեց վրան (մակբայ):

§ 63. ՆԱԵԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՅԵՏԱԳՐՈՒ-  
ԹԻՒՆՆԵՐԻ ԱՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Մէջ գրուած է ջ-ով, թէպէտ լուծւած է չ:  
Հոլովելիս՝ է տառը եզակիում դառնում է ի:—Միջի,  
միջից, սիջով և այլն:

2) Վրայ կարելի է գրել և առանց յ-ի:

3) Իրքն գրուած է ք-ով, բայց կարգում ենք իփրքն:

4) Դէպի գրուած է է-ով:

## Ը Ա Ղ Կ Ա Պ

§ 64. Նախադասութիւնները և նախադասու-  
թեան անդամները միմեանց հետ կապող բառերը կոչ-  
ւում են շաղկապ:—

Ես գրում եմ, իսկ դու կարգում ես:

Գիրքը նւ մատիտը սեղանի վրայ են:

Ամենագործածական շաղկապներն են՝ եւ (և) կամ  
ու, նա եւ, այլև, էլ, կամ (կամ թէ), եթէ, (թէ), որ,  
թէն (թէպէտ), այլ, որպէս զի, քան (քան թէ) և այլն:

§ 65. ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Եւ կարող է գրւել և:

2) Ու շաղկապից առաջ բառը վերջանում է ն:—  
Հայրն ու որդին:

3) Թէ, թէն, թէպէտ գրուած են է-ով:

## Մ Ի Ջ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

§ 66. Այն հնչիւնները և բառերը, որոնք ար-  
տայայտում են մեր զգացմունքներն ու կիրքը, կոչ-  
ւում են միջարկութիւն կամ ձայնարկութիւն:

Միջարկութիւններն արտայայտում են՝

1) Ուրախութիւն՝ ահ, սհ, էֆ:

2) Ցաւ՝ վախ, վայ, օ, սհ, ախ:

3) Ափսոսանք՝ ափսոս, աւաղ:

4) Բաղձանք՝ երանի թէ, սը էր թէ:

5) Զարմանք՝ վահ, օ, սհ:

6) Երկիւղ՝ վայ թէ, մի գուցէ:

7) Կոչ՝ սի, ս, էյ, հէյ, տօ, ձօ, այ:

8) Խրախոյս՝ կեցցէ, հա, ապրիս:

Կան նմանաձայն ձայնարկութիւններ, որոնք ար-  
տայայտում են անշունչ առարկաների և կենդանիների  
հնչիւնները:— Զը՛նգ, զը՛նգ, չը՛խկ, չը՛խկ, ճը՛ու,  
մի՛սւ (կատու), հա՛մ-հա՛մ (շուն) և այլն:



§ 67. ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Միջարկութիւնների գլխին դնում է ( ) կամ ( ) նշանը:—Ա՛խ, վայ, տօ:

2) Միջարկութիւնը, եթէ դրւած է նախադասութեան սկզբին կամ վերջին, միւս անդամներից բաժանում է ստորակէտով: Իսկ եթէ նախադասութեան միջին է, երկու կողմից անում է ստորակէտ:—

Ա՛խ, թոխր, ծիծեռնակ, ծնած տեղս Աշտարակ:

Որքան դժբաղդ եմ ես, ա՛խ:

Հերոսը, աւա՛ղ, այլ ևս չը կայ:

Վ Ե Ր Զ

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

23-դ երեսում օր բառը պէտք է հոլովել կանոնաւոր՝ օր, օրի, օրից և այլն, ոչ թէ օրւայ, օրւանից: Բայ է թողնւած մի ծանօթութիւն, ուր աււած էր, որ ժամանակ ցոյց տւող բառերը՝ բացի կանոնաւոր հոլովումից՝ ունեն նաև եզակի սեռականում այ և բացառականում՝ անից:—Օր-ւայ, օր-ւանից, տար-ւայ, տար-ւանից և այլն:

24-դ երեսում ջնջել 3-րդ տողից «իւ». 5-րդ տողից ջնջել «իւ դառնում է ա: Իսկ «պատիւ, պատուի» ենթարկել առաջին տողի կանոնին:





ՀՀ Ազգային գրադարան



NL0230995



6317

